



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 28

ՇԱԲԱՐԱԹ

10 ՄԱՐՏ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՆԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՒՄԱՆԻ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է .

ՄԵՍ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՁ 1900.

ԱՐՏԱԳՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ Ժիւռիի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բովանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, շղթաներու և գոհարեղէններու.
Կ. Պոլիս, Պաղչե-գարու, Օոոգսի-Պաֆ (Էօմեր-էֆէնի) վաճառատան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(T. آصاودریان) شرکت صتیبه مطبوعه — باب عالی جاده سنده نومرو ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառասէսի քիւ 52

Հատոր 40 փաթա



Չե՞նքի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի
 Եւրոպայի մեքենաներ
 կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
 ըստ էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅԾ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւորագործածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն ըզմանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՐԱՐԱԿԱՆ
 ՄԱՍՆԱԴԻՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

(1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .

(2. Մեծ փողոց, Կայաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

(1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.

(2. Դարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

(1. Սուլթան համամ .

(2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 :

ՍԿԻՒՏԱՐ

Չարչը Պոյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձեռնողներ գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
 343 կրկին, Տիւզդուլուի տունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 28

ՇԱՐԱԹ

10 ՄԱՐՏ 1907

ԾԱՌԱՆ Կ'ԱԻԼԷ ԿՈՐ ...

Առաջնակարգ վաճառական մըն է այս խօսքը ընողը՝ և տեսէք թէ ինչ պարագաներու մէջ :

Թերթի մը ցրուիչը՝ ամենայն համեստութեամբ և ակնածանօք, կը դիմէ այդ վաճառականին ու կը ներկայացնէ Տնօրէնին տուած մէկ նամակը՝ որուն մէջ անշուշտ, բաժանորդագրութեան մը ընկալագիրը կար, ինչպէս նաեւ վերջին թիւը նոյն թերթին :

Վաճառականը խորխտ ակնարկ մը նետելէ վերջ՝ ցրուիչին և թերթին վերայ, առանց նամակին ձեռք երկնցընելու, յոնքերը պռոտած կը սլափափանէ :

— Ախպար ժամանակ չունի՛մ կարգալու ... նա՛, բոլոր եկած թերթերը չեմ կարդար, հոս կը մնան ու ծառան կ'աշխատէ կոր ... :

Կրնաք երեւակայել անշուշտ Տնօրէնին դէմքը, ի լուր այս անակնկալ պատասխանին փոխան ... տարեկան մը բաժնեգինի :

Ահա թերթերու Տնօրէններուն պատուաբեր նիւթ մը, որ իր տեսակին մէջ թէ՛ նոր և թէ՛ հրահանգիչ (•) կլինայ ըլլալ :

Բնականաբար շատերու տրուած չէ մտածել ու խորհրդածել թերթի մը կազմութեան վրայ, անոր պատրաստութեան եղանակին, բովանդակութեան, նիւթերու ընտրութեան, տրվագորութեան, վերջապէս այն ամէն բաներուն վրայ ըսել կ'ուզեմ, որոնք ահագին յոգնութեան մը կը կարօտին մինչեւ որ ցրուիչներու ձեռքը անցնին վաճառուելու կամ ... ալլուելու համար :

Յիշեալ վաճառականը ժամանակ չունի եղեր կարգալու թերթերը, կա-
րելի է, ո՞վ ի՞նչ կրնայ ըսել, բայց
կարծեմ երբեք ներելի չէ իրենց, ըն-
դան վաճառական, ըլլան հարուստ կամ
չայ-կայֆ, թերթ մը ձգել այն վի-
ճակին մէջ, որ մինչեւ անգամ ծառա-
յին աւելին ենթարկուի . . . : Ասիկայ
դրամական չէ, այլ լոկ կենցաղագիտական
պակաս մը, որուն համար կը ցաւինք :

Բռնի բաժանորդագրութիւնը թէև
անվայել է անձնիւր գիտակցութիւն
ունեցող Տնօրէնի մը համար, քանի որ
այդ սխալները մուրացկանութեան կը
տանի՝ հակառակ գրական մասքէին տակ
գործուելուն, սակայն, բաժնեգիրը
վճարուելէ վերջ, թերթերը, ծառային
աւելին ենթարկելն ալ ոչ նուազ ան-
կենցաղագիտութեան յառաջ կուգայ, և
հաստատապէս ցոյց կուտայ հերոսին
սնարդիւրքիւնը և անկրթութիւնը :

Մեր մէջ կան ասանկներ, ցաւալի
է ըսել, կենցաղագիտական վարժա-
րանի մը նախակրթարանէն սկսելու
չափ անփորձ աշակերտներ, որոնք լոկ
դրամականին տուած կռնակին, կը
չափեն կը ձեւեն և մինչև անգամ կը
յանդգնին դրական մշակի մը երեսն
ի վեր պօռալու,

— Ի՞նչ պիտի ընեմ . . . ժամանակ
չունիմ կարդալու . . . ծառան կ'աւել
կսր . . . :

Պաւլօ՛, ըսելիք չիկայ շիտակը :

Բա՛յց . . . երբ խնդիրը զուարճու-
թեան և ցուցադրութեան գայ, ա՛. . .
այն ատեն քառաթէռը կը փոխուի,
նախկին բազմազառ (²) վաճառականը
տղու մը թերթուութիւնը կ'առնէ ու,
տեսէք թէ ի՞նչ լեզու կը գործածէ ի-
րեն դիմող խնդրարկուին կամ բաղ-
դախնդիրին :

— Բարեւ էֆէնտի . . . վստահ ձեր
թատերասիրութեան, որուն օրինակ-
ները քանի քանի անգամներ վայելած
ենք, այս անգամ կը համարձակինք

օթեակի մը տոմար ներկայացնել խընդ-
լեւով որ չի մերժէք . . . :

— Յ. . . լա՛ւ, լա՛ւ . . . նստեցէք . . .
ի՞նչ խաղ է, նո՞ր է, նո՞ր . . . :

— Այո, առաջին անգամ ներկա-
յանալի . . . :

— Շատ լաւ, ինչո՞ւ մերժեմ . . .
ես շատ կը սիրեմ զուարճութիւնը, նոյն
խաղ, պիտի աշխատիմ տասը քսան
օթեակ ալ ուրիշներու ծախել . . . :

— Ա՛հ . . . շատ ազնիւ էք էֆէն-
տի . . . շնորհակալ ենք . . . :

— Շնորհակալութեան պէտք չի-
կայ . . . մեր պարտքն է որ քաջալե-
րենք թատրոնը և անոր մշակները . . . :

Մարդուկը կը մեկնի ձեռքերը չը-
փելով :

Արդ նոյն վաճառականն է այս, որ
քիչ մը առաջ գործերուն առատու-
թեանը պատճառաւ ժամանակ չունէր
չաքաթաթերթ մը թղթատելու, ու կը
ձգեր որ ծառան առէ գետիններէն,
մինչդեռ հիմա, թատերական ներկա-
յացման մը համար՝ ոչ թէ միայն եր-
կու ոսկինոց օթեակը չի մերժեր, այլ
տասը հատ ալ ծախելու խօսք կուտայ,
ժամանակ կունենայ տունէ տուն պտը-
տելով տեղաւորելու այդ տոմսակնե-
րը . . . յանուն թատերասիրութեան :

Համա՞հ . . . , ի՞նչ գաղափար կաղ-
մեցիք այս իրական պատմութեան վը-
րայօք, ազնիւ ընթերցողք, դուք որ
կարողութեան տէր էք ու կրնաք խոր-
հիլ ու դեր ու դէմ կարծիք մը յայտ-
նել այս տխուր պարագային վրայ :

Տխուր իրողութիւն մը չէ՞, սա պա-
րագան թէ՛ օթեակի տոմսակները մեր
հրատարակած թերթերէն շատ աւելի
բարձր կարեւորութիւն կը դրենուն, ու
այն մարդիկ՝ որոնց հասցէին զրկուած
թերթերը ծառային աւելին կ'ենթարկ-
ուին, օթեակի տոմսակները տունէ տուն,
ձեռքէ ձեռք կը պտտցնեն . . . :

A bon intendatere poche parole !

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՊԱՐԱՅԱՆԴԵՍԻ ԳԻՃԵՐ ՄԸ

Զարմանալի տեսարան. երբ ամիսը կը պարէ, կարծես աչքիդ առջև կը պատկերանայ Կարմիր Մովսէս Մովսիսական մեծ անցքը, իսկ երբ չի պարեր՝ քեզ այնպէս կուգայ որ Ղալաթիոյ Պօրսային սանդուխներուն վրայ կը գտնուի այնպիսի օր մը երբ երկաթուղին յանկարծ հինգ ֆրանք վրայ դրած է, այնքան փոշի, այնքան աղմուկ, այնքան խառնաչփոթութիւն կայ հոն:

Ընտանեկան պարահանդէսի մը համար ասկէ աւելի «ընտանեկան» մը կազմակերպել կարելի չէր:

Մեծ մայրն ալ հոն է մեծ հայրն ալ, առանց հաշուելու կէս երկոտամետակ քոյրերը, քեռորդիները, հօրեղբայրները, մօրքոյրները և այլն:

Աւելին կայ:

Ես հրէուհի մը տեսայ հոն որ մինչեւ անգամ հետը բերած էր ընտանիքին ապագայ անդամ մը, որ գալ տարի ճիշդ այս ատեն հաղիւ պիտի կրնայ շատ շատ ինը կամ տասը տասու ըլլալ: Խեղճ մանկիկ և երջանիկ աւարած, որ կեանքի մէջ մտնալէ առաջ պարահանդէս կը մտնայ... առանց տոմսակի, և որ պարել կրնայ՝ առանց ոտքերը գետինը զայցնելու. ի ծնէ վալսետ. առաւիկ մանկապարտէզի հիմնալի դրութիւն մը, որ ոչ Ֆրէօպէլի քով կար և ո՛չ ալ մանկապարտիզպանուհիներուն:

Պարզապէս իմ նախանձս կը շարժէ այդ երկսեռ երիտասարդութիւնը. տեսնելու է ի՞նչ տենդով և ի՞նչ խանդով կը պարեն աւերդհատ մինչեւ առաւօտ:

Պարահանդէսին մէջ պարը հաճոյք մըն է որ ոտքերէն կսկսի և կամաց կամաց կը վերանայ: Երա՛նի անոնց որ կրնան սրտերնին ուղղակի յարաբերութեան մէջ դնել ոտքերուն հետ. և երբ արդելք մը չկայ այդ երկուքին մէջ կամ երեքին, եթէ կուզէք, այսինքն... երկու ոտք և մէկ սիրտ:

Մեծ բազմութիւն դիմակաւորներու, գոյներու մէլի-մէլօ մը, ուրիշ ոչինչ: Բայց կըռան-ըրթօն ետքը ամենքն ալ երեսներն բացին:

Երեկոյթը շատ զուարթ և շատ կանոնաւոր անցաւ:

Հայ, Յոյն և Հրեայ հասարակութեան պատկանող անձեր համերաշխ զբօսանքի ոգիով միացած շատ հաճելի ժամեր անցուցին, բացի ինձմէ:

Գիտնա՛ք ինչ քաջեցի: Երեւակայեցէք քամա մը, որ երբայեցեդէնէ զատ ուրիշ չեղու չի խօսիր, բայց սակայն հրապուրիչ է արգիլելալ պտուղի մը պէս:

Առջի երկու երեք ժամը զիրար կրցանք հասկնալ. խօսելու համար անպատճառ լեզուի պէտք չկայ. պերճախօս աչեր որոնք յանդուգն ձեռներու միանալով՝ լեզուի պաշտօնը կրնան կատարել:

Խեղճ աղջիկը յանցանք մը միայն ունէր. քնատուութիւն: Երկու վայրկեանը անգամ մը կը մրափէր, ճարահատ. միջոց մը ղինքը օթեակ մը կ'առաջնորդեմ և անմիջապէս արժուի մը վրայ կը կծկուի, մշիկ մշիկ քնանալու:

Երեք, չորս, ութ, տասն անգամ քովը կերթամ, դեռ կը քնանայ կոր: Աստու կըլլայ՝ պիտի մեկնիմ, բայց առանց ձեռքը սեղմելու, կարելի է:

Նորէն քովը կերթամ, դարձեալ քնացած. լեզու չեմ գիտեր որ արթնցնիմ ղինքը:

Զորս անգամ կը մօտենամ, բայց չեմ համարձակիր:

Հաշուոյս մէջ աս չի կար:

Պիտի ըսէք թէ կրնայի առնել քալել առանց ձայն տալու:

Կը հաւատամ, բայց թաշկինակս քովն է, և վրայ տալու դիտաւորութիւն չունիմ. ընդհակառակը:

Կատաղութիւն եկաւ վրաս:

Վերջին անգամ մըն ալ կը մօտենամ, բայց հոն տեղուանքը չէ, ռնգեղջիւրի պէս կը քնանայ:

Ա՛ս ուրիշ գտայ, Աստուած իմ:

Ինքզինքէս ելած օթեակին դուռը կը բանամ. և ձեռքիս հրամայական ձեռ մը տալով և չեչտով մը, զոր Շիրքէթի նաւապետները միայն ունին, ականջն ի վար կը պոռամ. «Տալիթա Կո՛ւմմի»:

Թեւիկ վրայ կոխուած տատրակի մը պէս կը զարթնու վերջապէս:

Թաշկինակս կառնեմ և կը մեկնիմ:

Յ. Ա.ՓԻՆԱՐ

ԱՄԵՐԻԿԱՆ ՊԱՏՄՈՒՆԻԿ

ՓՈՐՁԱՆԱԽՈՐ ԿՕՇԻԿՆԵՐԸ

Ատենոք Ամերիկայի մէջ ինքիր գլխուն կ'ապրէր Վուտս Բարքըր անուն շատ հարուստ, բայց շատ կծծի ծերուկ մը: Իր ծայր աստիճանի խնայասիրութիւնն էր, զոր օրինակ, մէկդի չի նետել իր հինցած կօշիկները և երբեք չ'ապսպրել նորեր: Երբոր ծակէին անոնք, կարուակին կը տանէր՝ կարկըտել տալու համար, ու կը շարունակէր գործածել զանոնք չորս հինգ տարի դեռ աւելի: Այս ոտքի ամանները գործածումէ և կարկըտաններէ ափսոսանք և ա'յնչափ ծանրացան որ նոյն արուարձանին բնակիչները ա'լ առածի կարգ անցուցած էին սա խօսքը, երբոր խնդիրը ծանր բեռի մը չուրջ դառնար:

— «Վուտս Բարքըրի կօշիկները կը նմանի»:

Օրին մէկը ծանօթ մը ներկայացաւ իրեն, ըսելով թէ խանութպանի մը քով վարդի ազնիւ ջուրով լեցուն բաւական չիշեր կանձ՝ զորս կարելի էր շատ աժան դնել և հաքէն կրկինը չահիլ: Ասանկ առիթ մը շատ ուղիղ կը համեմատէր ազահին շահամուլութեանը հետ, ուստի գինը վճարեց ու տարաւ չիշերը տունը պահեց:

Շատոնց կ'ընէր բաղնիք դացած չուներ, դնաց և բարեկամ մը հոն դիմաւորելով զայն:

— «Բարքըր, ըսաւ, Աստուածդ սիրես, փոխէ՛ սա անհեթեթ ոտքի ամաններդ, ալ շատ ծանրըքն են»: Մարդուկը հաւանեցաւ, ու լուացուելէ ետք՝ երբ դուրս կ'ելլար հագուելու, շատ չի զարմացաւ երբ տեսաւ որ իրենները անյայտ էին եղեր, տեղը՝ զոյգ մը նորոշոր կօշիկ պատրաստ, զորս հաճոյքով քաշեց ոտուրներուն, իր կծծի ծանօթ արամաքանութեամբը հետեւցնելով թէ բարեկամը ուղեր էր անակնկալ մը առիթել իրեն: Ափսոս որ հագածները կը պատկանէին դատաւորին՝ որ նոյն պահուն իրեն պէս բաղնիք էր մտած լուացուելու: Այս վերջինը իր կարգին դուրս ելլալուն՝ կրակ կտրեցաւ, երբ իր նորերուն տեղ նշմարեց կոշտ, տծեւ, նայ նահապետէն մնացած այդ հին ոտքի ա-

մանները, և սխալմամբ հագնողը իբր գող դատաւարտեց 100 տոլար տուգանքի:

— «Սա անպիտան կօշիկները շատ սուղի նստան ինծի, ստրկի՛ մըն ալ ըրին պատիւս» մենախօսեց Վուտս, ու բարկաճայթ՝ ծովը նետեց զանոնք: Երկու օր վերջ, գեղին ձկնորսները իրենց ուռկանը քաշած ատեն գտան զանոնք ու դիւրաւ ճանչնալով անոնց համբաւեալ տէրը՝ իրեն վերադարձունել ու գեղին զայն: Դուռը գոց գտնելով, ձկնորսները ներս նետեցին կօշիկները բաց ձգուած պատուհանէ մը: Ջուրէն ու կարկըտաններէն կապարի պէս ծանրեցած զոյգը գացին իյնալ ճի'շդ այն տեղը՝ ուր վարդի ջուրով լեցուն արուակները դիզուած էին իրարու վրայ: Յիսուն չիշերէն հաղիւ հինգ հատ մը ողջ մնաց:

— «Խեղճի՛դ անիծածս, քաշելի՛ք ունիմ եղեր ձեր ձեռքէն» ունալով, Վուտս ուշ ատեն տարաւ թաղել զանոնք տունին մէկ անկիւնը: Դրացիները կարծելով թէ անիկա գիշերանց իրենց տունին հիմերուն վընաս բերող պեղում մը կը կատարէ կոր, յաջորդ առաւ չուշացան երթալ բողբոջու, և դատաւորը կռող տեսածի պէս զգուշացնելով ներկայացուած յանցաւորէն՝ նախկին վճիռը կրկնեց անոր դէմ, առանց բարակը շատ փնտռելու:

Տուն դարձին, Բարքըր ամէն ատենէ աւելի տխուր ու զայրացած՝ բռնեց ջուրի ճամբու մը մէջ թխեց զանոնք դադաւագողի: Շատ չանցած, թաղեցիները ջուրի հոսման անկանոնութիւն մը նշմարեցին, և փողոցը՝ սալաշատակներուն տակ թաղուած խողովակներէն քանի մը թեւ քակելով՝ դիւրի'ն հաւ ստուգելին թէ նոյն կօշիկներն էին ագուգայքը թխմողը: Տուգանքի գումարը աս հեղու կրկնել հարկ եղաւ:

Այս երբեակ դժբախտութենէն ճարահատ և յուսաբեկ՝ առաւ կօշիկները, լուաց, տունին տանիքը հանեց՝ արեւին շարցունելէ յետոյ այրելու, մոխիրի՛ վերածելու համար անիծեալ ամանները իր ոտքերուն: Շնիկ մը տանիքէ տանիք ոստոստելով կաշիին հոտը առաւ և սկսաւ խածխոտել տրեխի այդ անձանոց զանգուածները. բայց կ'երեւի թէ քիմիկն յարմար համ մը չառնելուն համար

վար, փողոց ձգեց զանոնք: Սատանան դործ
չունի՝ մէկը գնաց կիւմը ... Ինկաւ կնոջ
մը գլխուն, որ նոյն պահուն հոնկէ կ'անցնէր,
և վիրաւորեց գանկը: Էրեկը վազեց գան-
գըտիլ ուր սր անկ էր, ու խեղճ Բարբըր
սկսաւ ողբալ իր ճակատագիրը, տուարները
վճարած աստին սիրտին եղե՛րը հալելով:

Մինչեւ սը'տեղը եկած էր ալ. ա'ս քաշ-
ուելիք բան չէր, պէտք էր ո'ր եւ է կերպով
բնաչինչ ընել ազետալի կօշիկները կամ վերջ
մը տալ բախտին այս դժուգակ խաղերուն:

— «Կ'աղաչեմ, յանո'ւն Աստուծոյ, ա-
զատեցէ՛ք զիս սա վիճակէս» ըսաւ լալա-
գին և փաթտուեցաւ դատաւորին ծունկե-
րուն, պատմելով զլիսուն բոլոր եկածները
փորձանաւոր կօշիկներուն երեսէն: — «Կը
փափաքեմ, աւելցուց, որ այսուհետեւ իմ և
սա կօշիկներուս մէջ որ եւ է առնչութիւն
մը ըլլալը հաճիք յայտարարել և առ այդ
անպարտադիր մը չնորհել ինձ թէ ա'յս օր-
ուընէ երբեք չեմ պատասխանատու՝ երբո'ր
այս կօշիկներուս առթիւ որ եւ է անպա-
տեհութեան մը, արկած մը կամ դժբախտու-
թիւն մը»: Դատաւորը որ այս պատմու-
թեամբ բաւական զբօսած էր արդէն, չուշա-
ցաւ նկատի առնելու անոր խնդրանքը:

Թարգմ. Անգլ.

թ.

ԱՐԵՒԵԼԷ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղա-
քական: — Բաժանորդագրութիւն՝ տարե-
կան՝ Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառնե-
րու համար 108 դրշ. և օտար երկիրներու
համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Բաման-
սօ փողոց: ԱՐԵՒԵԼԷ հրապարակ կ'ելլէ ա-
մէն օր, կէս օրին, խնամաւ թողանդակու-
թեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լու-
բերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԴԵՒԻՆ ՏՂԱՆ

[ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ]

Կեանքիս փոթորկուն իրիկուններէն մէկն
էր: Յուսահատ՝ ներս մտած, ու կազդու-
ուած՝ դուրս կ'ելլէի եկեղեցիէն, որուն դա-
ւիթին մէջ, քանի մը հալւորներ մանուկի
մը շուրջը բոլրած՝ հարց ու փորձ կ'ընէին:

Երկինքէն ինկած հրեշտակ մըն էր կար-
ծես տղեկը: Անմեղութիւնը կը ցոլցար սըլ-
բատաշ ճակտին վրայ: Քիթ, բերան, ա-
կանջ՝ մկրատուած, ա'յդքան համաչափ, կա-
նոնաւոր ու շարմղուն էին: Քնքուշ թուշե-
րուն վրայ՝ դեղձի մկանունը դեղի'նը կա-
թած էր, խնձորին պոռո'տ ծիրանիին տեղ:
Թարթիչագեղ աչուկները՝ արցունքի հրեղէն
կաթիլներուն տակ կ'այրէին որոշապէս: Իր
մարմար մարմինը՝ հազի'ւ հազ կը սքօղուէր
կարկտուն պարեգոտի մը մաքուր ծաղքերուն
մէջ:

Տունին ճամբան կորսնցուցած մանուկ մըն
է քսի ինքնաբերաբար:

* * *

Ծերունիները՝ որքան տարիներու, այն-
քան մըն ալ նախապաշարումի բեռին տակ
կըքած, իրարու բաներ մը կը փափայային՝ հեղ
մը ինծի, հեղ մըն ալ մանուկին նայելով:

Մէջերնէն մէկը՝ խօսքն ինծի ուղղելով,
բնձ մեզ աղիկի մը ծնունդն է առ տղան,
ըսաւ, մինչդեռ ուրիշ մը աւելցուց թէ, սեւ
սատանան է ատի՛ առ թուչուտ կերպարան-
քին տակ տագնաւ:

A proprement parler, ես բան մը չէի
հասկնար այդ բամպակ գլուխներու ո'չ ձե-
ւերէն, ո'չ ալ խօսքերէն: Բարեբախտաբար՝
ներկաներէն է'ն լուրջը խնդրեց, որ մանու-
կին պարագաները հարցնեմ, որպէս զի տեղը
ղաւորեմ:

Գառնուկին զնդիկ մազերը շոյեւէ վերջ,
նիհար ձեռքերը ափիս մէջ առի, ու սկսայ
հարցնել անուշ շեշտով մը,

— Անունդ ի՞նչ է.

— Դեւի'ն տղան:

— Հայրիկդ ո՞վ է որ,

— Դե'ւն է:

— Տուներնիդ ո՞ր տեղ է:

— Դժո'խքը:

* * *

Արդեօք ինձի հետ խա՞ղ մը կը խաղցուէր : Առեղծուածի մը առջեւ կը գտնուէի :

Քչիկ մը խորհելէ հտքը, խնդրեցի, որ մանուկը ինձի յանձնէն, բնականաբար ապահովցնելով զիրենք թէ, պարզապէս տունին ճամբան կորսնցուցած տղեկ մըն էր ան, ու ես կրնայի տեղը գտնել :

Մանուկին ձեռքէն բռնած՝ ճամբայ ինկայ : Բայց ո՞ւր կ'երթայի, ե՛ս ալ չէի գիտեր : Վերջապէս, չորս ճամբաներու միացած մէջ տեղը կանգ առի՝ երբ շուկայէն տուն կը կործէին արդէն մարդիկ :

Ամէնուն ուշադրութեանը ներկայացնելով անմեղ մաղսու՛մը՝ դրացի մը, ծանօթ մը, աղգական մը կը փնտռէի : Վերջապէս մեղմադճոտ շողերուն պէս, հետզհետէ կը նուաղէին յոյսերս՝ անծանօթ կամ անտարբեր անձերու տողանցումը դիտելով :

Սակայն, յանկարծ, բարեկամներէս մէկը, որ, *comme sa barbe de fleuve*, ա՛յնքան շատ ընտանիքներ կը ճանչնայ, մեղմիկ մը ուսիս դպչելով, մեղմադճ քմծիծաղով մը ըսաւ .

— Ես կը ճանչնամ ատ տղան, տուններնին ալ գիտեմ, տեղը տանինք :

* * *

Քաղքին մէկ ծայրը, տասնեակ մը տուններ կանգնուած են, եզանլեզու ցամաքի մը վրայ, որ կղզեակի մը երեւոյթը ունի՝ զոյգ մը դետերու բալուկներուն մէջ գրկուած ըլլալուն :

Նորաչէն ըլլալով հատ մը՝ վարը, հատ մը՝ վերը, մէկ հատ ալ մէջ տեղուանքը կը տեսնես : Միւսները դեղի տգեղ շէնքեր են, հին օրերէ մնացած բնակարաններ որոնք՝ Ղազարոսի կօշիկին պէս կոշտ, բայց դիմացկուն կ'ըլլան :

Կամուրջէ մը անցնելով, այդ տուններէն մէկուն առջեւ կայնեցանք : Ապահովաբար է՛ն հինն էր ատիկա, քանի որ պատշաճ՝ փլփլեալ, ծեփերը՝ թափթփած, պատուհանները՝ ծռուկած, ու շէնքին իրանը մէկ կողմին կործած էր՝ ուշակորոյս և ուժասպառ հարբածներուն պէս :

Մօրուեղ բարեկամս այդ խլիլիկ տունին մօտեցաւ, որուն չփուած դուռն ու սրբուած սեմը միայն կը մասնէին մարդաբնակ ըլլալը :

Երկու հեղ ռա՛խ՝ ու կնոջական թրթռուն ձայն մը ո՛վ ըլլալնիս հարցուց : Քովիս պըզտիկը՝ ե՛ս եմ, մայրիկ, բա՛ց դուռը, հեծկըլտաց : Հերարձակ կին մը՝ դուռը բանալն ու տղուն ճիտը իյնալը մէկ ըրաւ :

Արցունքները իրա՛ր խառնեցին : Բարեկամս՝ ընտանեբար յորդորեց մայրը, որ մաղսու՛մին տէր ըլլայ : Եւ երբ երեսնիս դարձնելով պիտի մեկնէինք, նիհար բայց գեղունի կնոջ կուրծքէն հրափետուր հառա՛չ մը թըռաւ .

— Ա՛խ, ի՛նձի ո՛վ տէր պիտի ըլլայ : Ատո՛ւ՛ււմ իմ, ե՛րբ ձայնս պիտի լսես ու խա՛ւսնս գիտ :

* * *

Վերադարձունս, բարեկամս, որ բոլոր թշուառներուն բարեկամն է՝ պաշտօնին բերումով, ինձի պարզեց կորսուած մանուկին տուած պատասխաններուն առեղծուածային հանգամանքը՝ որ գայթակղեցուցած էր ժամուն բակի նախապաշարուած ծերուկները :

Այդ մանուկին հայրը՝ խման մըն է եղեր, որ՝ իր բարեկեցիկ վիճակին բերումովը, կըրցեր է պարկեշտ ու գեղանի կին մը ունենալ : Որովհետեւ, մեր այս կողմերը, ԴՐԱՄԵ կամ ժողովուրդի պատկերոտ բառով՝ ԴՄԱԿը ա՛մէ՛ն թերութիւն, ա՛մէ՛ն տղեղութիւն, ա՛մէ՛ն աղք, ա՛մէ՛ն ախճ կը ծածկէ ու կը պարտեղէ : Ա՛յսպէս եղած է անորոշ ժամանակներէ ի վեր :

Ծաղկաւոր կնոջ սէ՛րը, զգուա՛նքը, լա՛ցը, դրացիներու խրատը ու աղգականներու յանդիմանութիւնները չէ՛ն կրնար զգաստացնել այդ անզգա՛յ մարդը, որ օղիի բաժակին մէջ կը կորսնցնէ հարստութիւն, առողջութիւն ու պատի՛ւ :

Վշտահար ու դժբախտ կնոջ աղքատութեանը, թշուառութեանն ու մերկութեանը վրայ կուգայ կ'աւել՛այ նաեւ թի՛րոտ ծեծը :

Ու, ա՛լ դժոխք կը դառնայ տունը, որ դրա՛խս մը կրնար ըլլալ :

Բոլոր դաւկրները զո՞ն կ'երթան անունդի պատկասութեան կամ . . . արկածի : Հինգ տարու տղեկ մը միայն կը մնայ՝ տասներէնդ տարուան ամուսնութենէն :

Այդ անուշ տղեկը, որ ժամուն մօտերը կորսուած էր՝ աղգականի մը տունը գացած ատեն, հիմա ճակատագրուած է հայր կոշեւուն մէ՛կը, որ, ալքոյի աղղեցութեան տակ, դեւի մը դիմագիծերը հագած է խկապէս :

Ու թաղին օճուրոյ պղտիկները՝ այս անմեղ մաղսու՛մին անունը դրած են .

— Դեւի՛ն տղան :

ՄԻԷՐԱՆ ԻՍՊԻՐԵԱՆ

ՔԻՉ ՄԵ ԻՐԱՒ՝ ՔԻՉ ՄԵ ՍՈՒՅ
ԱՆՔԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ...

Օր. Շագիկ Փսածեան 29 տարու
Պր. Զենով Ինկածեան 28 »
Պր. Սեպուհ Կուզեմեան 27 »

Օր. Շագիկ. — Պ. Ինկածեան, ինչո՞ւ այսքան ամուսնութենէ կը խորշիք, չէ՞ք տեսներ որ ժամանակնիդ կանցնի, ձեզի համար ալ է խօսքս Պ. Կուզեմեան:

Կուզեմեան. — Օրիորդ, ներեցէ՛ք որ բան մը դիտել տամ՝ ձեզի, մեզիպէսները պէտք չէ որ ամուսնանան:

Օր. Շ. — Ինչո՞ւ, կրնամ հասկնալ:

Կուզեմ. — Որովհետեւ կտրած թափած բաներ ենք:

Օր. Շ. — Զեմ հասկնար կոր, ի՞նչ ըսել կուզէք:

Կուզեմ. — Սա ըսել կուզեմ որ՝ կարեւոր պահատութիւններ ունինք, ճիշդը խօսելով:

Օր. Շ. — Օ՛հ, ի՞նչ պահատութիւններ կրնաք ունենալ, ես բան մը չեմ նշմարեր կոր ...:

Կուզեմ. — Կուզէ՛ք, օրիորդ, թուե՞մ այն պահատութիւնները՝ որոնցմով օժտուած է Պր. Զենովի Ինկածեանը:

Ինկածեան. — Սակայն, պարո՛ն ...:

Կուզեմ. — Սակայն մական չիկայ, պէտք է որ քեզ ներկայայնեմ օրիորդին, ինչպէս որ ես (օրիորդին դառնալով) նախ պարոն Ինկածեանի ակօսները վերով վարով կեղծ են ...:

Օր. Շ. — Այն մարդարոտաշար ակօսները ...:

Կուզեմ. — Այո՛, այն մարդարոտաշար ակօսները վարպետ ատամնաբոյժի մը ձեռքէն ելած են, և պատիւ կը բերեն իր արհեստին: Երկրորդ, ինչո՞ւ պարոն Ինկածեան սեւ ակնոց կը դորձած է:

Օր. Շ. — Ինչո՞ւ ...

Կուզեմ. — Որպէս զի մէկ աչքին չիլու-թիւնը ծածկուի:

Ինկած. — Սակայն պարո՛ն ...

Կուզեմ. — Նախ հետը խօսած ժամանակնիդ, օրիորդ, պէտք է ամուր խօսիք, որովհետեւ քիչ մը ... խուլ է:

Ինկած. — (Օրիորդին) Հարկաւ մօիկ կը նէք, երբ պարոն Կուզեմեանի առաւելու-թիւնները թուեմ իմ կարգիս:

Օր. Շ. — Ինչո՞ւ չէ:

Ինկած. — Նախ քնաչքջիկ է:

Օր. Շ. — Ա՛ ...

Ինկած. — Շատ անգամ իր մագերուն դովեառը կտրեացած էք, հիմակ ճակատա-բոյց կրնամ ըսել որ, պարոնը ճաղատ է և կեղծամ կը դորձած է:

Օր. Շ. — Օ՛ ...

Ինկած. — Վերջին բան մըն ալ պիտի ըսեմ՝ որ ամէնուն վրայ լիմոն կը քամէ, պարոնին դրպանէն, մի՛շտ, տուփ մը դեղահատ պակաս չէ ...

Օր. Շ. — Պարոնե՛ք, դուք իրա՛ւ կոտ-րած թափած բաներ էք եղեր, մանաւանդ դուք, պարոն Կուզեմեան ...:

Վ. ԳԵՐԳԻՅԱՆ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՆՈՒԱԳԱՅԱՆԴԵՍԸ

Մեծ հանոյժով կը լսեմ Մեծայարգ Ուսուցչապետին եւ իր տղայար վարժարանին ի նպաստարեւի Նուագահանդէսի մը գաղափար:

Պերպերեան եֆեֆի՛ն անունի եւ դիրքի տեղ տեղանաւոր սաներէն մասնախումբ մը կազմուած է, որ ջանք չի խնայի շեղ ու արդիւնաւոր ընծայելու համար այս հանդէսը:

Ըստ մեզ, մեծանուն Ուսուցչապետին ի պատիւ ասկէ աւելի գովելի յարգանք մը կարելի չէր երեւակայել, եւ մասնաւորաբար յիշատակելի են ամեն անոնք, որոնք յղացան այս անսգիւս գաղափարը:

Պերպերեան վարժարանի սանունք սիրով եւ եռանդով պիտի փարին անուշ իրենց Մեծ վարպետին անունն եւ վարժարանին բարեխաւութեան եւ յառաջադիմութեան համար կազմակերպուած այս նման չի տեսնուած ՔՕՆՄԷՈՒԻն առթիւ, եւ ամեն անոնք՝ հեռուէն քե մօտէն, որոնք կը յարգեն ու երախտապարս կրգգան ինքզինքնին, Մեծ կրթիչին ու Մեծ դաստիարակին բազմաշնորհ ու բազմադիմ գործունեութեան համար, պիտի փութացնեն իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնը:

ԼՈՒՐԵՐՈՒ ՏՐՑԱԿ

ԱՐՁԱԿ ՀԱՄԱՐՁԱԿ

Նախորդ «Տրցակ»-իս վրայ կասողեր են ու իրար անցեր
 Ս. Կարապետի ուսուցիչները — բոլոր պօշ անձեր . —
 Մանաւանդ իրենց տեսչին ու ասոր խըստիկ ողիին ,
 Որոնք աննրկած չիլտեն քե զարնեն գլուխին ո՞ր դին . . . :
 Ու տեսնելով որ ձեռքերնեն ոչինչ կուգայ , հառաջեն
 Սպառնալիքներ քնելով ինծի ձախեն ու աջեն !
 Բայց , գիտցե՛ք , խեղներ , սպառնալիքներն բոլոր ու ձեր քեն
 Չեն կրնար երբեք ազատել զձեզ Էս-Սէին ձեռքեն . . . :
 Եւ ահա՛ տա՛ք տա՛ք խայրող գրիչս ձեռք կառնեմ կրկին
 — Չե՛ք , մի կարծեք որ ինծի պէս մարդիկ դուրին կընկրկին —
 Ու նոյն յանգերովս մեջն « Հանրագիտակ » զուարթ հանդէսիս
 Կը շարունակեմ գրել « Լուրերու տրցակ » Ֆանթեզիս . . . :


* * *

Նկատելով որ շոք քաղին համար Հրեշտակապետ ,
 Հրդեհի յատուկ միտք ջրհանի մը անպատճառ կայ պէս ,
 Խոհուն , գործունեայ Թաղականութիւնն արդի պատուարժան ,
 — Որ հողէն , քարէն կարծես հրաւճով կըստեղծէ . . . argent —
 Բերել կուտայ կոր ծծող ու ննուող մի հրեշք ջրհան ,
 Որպէս զի շուտով մարե տունները այրող գերդ չըրան :
 Երեսունի մօտ երեսասարդներ , ամենքն ալ կայտառ ,
 Ամեն արհեստ , հացագործ , դարբին , հիւսն , սափրիչ , պայտար ,
 Աւերող տարրին առջեւ դնելու համար արգելք , բուժք
 Կազմած են արդէն ջրհանկիրներու ամառքոն մի խումբ :

* *

Հին ու խաբխուլ էր դպրոցն աղջկանց մեր Ս. Հ. քաղի ,
 Որ գուցէ փչէր հովէ մը յանկարծ օր մը կատաղի ,
 Թողելով իր տակ հոն առնել գացող դաս , խրատ , համար
 Մեծ , պզտիկ բոլոր անմեղ աղջիկներն անթիւ , անհամար :
 Թաղ. Խորհուրդը զայն սկսաւ հիմա նորոգել հիմեն ,
 Միայն քե երբոր քաղեցիներու քաւիին դիմ . . .
 Առատածեղքն՝ պէտք է տան անոնք տակ , փառայ , որ
 Գործն ելլէ գլուխ , շէնք աւարտի շէնք , փառաւոր :

ԷՍ-ՍԷ



ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՀՈՎԵՐ

[Շար. եւ վերջ]

Հայագործին չէրէլէն, մասվաճառին ու նսպարավաճառին տետրակները ամսէ ամիս ոչ թէ արինայով՝ այլ, դեղին ու կարմրորակ ոսկիներով մաքրողները միայն գիտեն թէ ի՞նչ ըսել է միսափորին ՄԻՍԱՖԻՐԸ:

Բերա, Կ. Պոլսոյ այն միակ արուարձանն է, ուր հաստատուողները ձմրան՝ մանաւանդ բարեկենդանի ուրախառնթ օրերուն մէկ մէկ պանդոկապետ կը կտրին: Սենեակները կը հեծեն միսափորով, վերմակները, անկողինները քիչ կուգան, չեն բաւեր ու այնպէս կը պատահի որ — Ստուած մի արասցէ — թէյզէի աղջիկներ, հալայի տղու մը հետ մէկ անկողին կ'իյնան, բուզէն բուզիմ մէկ տնեակ, ու ... շատ անգամ ալ փեսայ դռանը ... բայց ի՛նչո՞ւս պէտք, բամբասանքը չեմ սիրեր:

Սա սովորական երկու խօսքէն վերջ, դառնանք մեր նիւթին որ կատարեալ պատկերն է այդ կարգի փորձանքներու, որուն ղոհուած էր Վիչէն աղան մեր պատմութեան հերոսը:

Ընթերցողները կը յիշեն անշուշտ այն վիճակը՝ ուր ձգեցինք Վիչէն աղան ի տես իր խնամիին և անոր երեք հասուկներուն, որոնք բարեկենդան շինելու համար հեւ ի հեւ եկած խոնուած էին խեղճ մարդուն տունը:

Նիւթը ըսի քսաներու շառլաթանութիւններով չի խճողելու համար անցողակի ըսենք թէ՝ Վիչէն աղայի համբերութիւնը հատած, գլուխը ճաթելու աստիճան տաք, լուտանքներ կը տեղար առ հասարակ, ոչ թէ միայն իր կնոջը ու աղջկանը, այլ նաեւ հիւրերուն, առանց քաշուելու և կամ ակնածելու:

Բայց ... կնոջ լեզուն օձէն փոխ առնուած է կըսեն, և կարծեմ թէ շատ անճոռնի այլարանութիւն մը չէ:

Մինչ միտիւ Սաճայաղեան իրեններուն հետ օղիին գլուխը անցած իր զուարճու-

թիւնը կը նայէր, Տիկին Բերրոն՝ պզտիկ արդու մը պէս քէն ընող Վիչէն աղայի քով երթալով, նախ հաղար և մէկ դժուարութիւններով կը յաջողի համարյոք մը դրոշմել բռնկելու մօտ ճակարին վրայ,

— Օ՛րա ... սիրտս պախճա բացուեցաւ ... շատոնց է ասանկ երես տուած չունէ՛ի ամա՛ ... նէ իսէ բարեկենդան է տէյի ...

— Բու ներսիդիդ պախճա բացուեցաւ ամա Վիչէնին ալ քէսէն բացուեցաւ ... կը հաւնի՞ս կոր քա ... սանկ մէյ մը ներսի օտային դուռը բա՛ց տէ մէյ մը նայէ, ինքիզինքըս Պուռսալըին օթէլը կը գիտնամ կոր ...

— Բա խմին չամիչ աշուի էրիկս, իմին խօսքմըտուկ կլխաւորս, պոյըդ պօսըդ սիրում ... (չա՛ր համարյոք մը՛ ալ):

— Է՛յ ... եանշախութիւն չեմ ուզեր կընիկ ... ինծի նիսպէթ կուգայ կոր, պէնի հաւատքտան օրէնքտէն չըգարտմա ...

— Ինծի նայէ քի ըսեմ Վիչէնիկ աղաս, ես գիտեմ ի՛նչ կը մտմտաս կոր նէ, սանքի կընիկդ անտար կը սիրես քի, աս միսափորներուն ուղուին աճապ ինտո՞ր պիտի յոգնիմ տէյի խըռս կ'եղաս կոր հա՞ ... արեւուդ օրերուդ կոտորիմ, (չա՛ր, նորէն պաշիկ մը) ...

— Է՛յ ... չօգ չէյ, վրաս փուշ փուշ կըլլայ կոր ... մընէր ըսի ...

— Գուզում անուշիկ էրիկս, եկուր չէնք չնոր՝ք ներս, աղւոր աղւոր խմէ, խօսէ, քէֆու նայէ, ճահիլ ճիւղւ սիրտերնին մի կոտորեր ...

— Մի վախնար կընիկ, հոգ մընէր, անոնց սիրտը խուռչինի պէս է, կը ծռի ամա չի կոտորի ...

— Հէմ ինծի նայէ Վիչէնիկ աղա, դուն ասանկ զատ օտա մը կը նստիս կոր նէ, ես ալ գիտես քի որբւարի եմ ի պէս կ'ընա կ'երթայ կոր ...

— Ինչո՞ւ, փեսադ ներսը չէ՞ ...

— Ամա՛ն, խենդ լաֆեր մընէր կենէ,
փեսիս տեղը զատ քու տեղը զատ ...

— Կընիկ, կուգամ, կուգամ ամա, պըզ-
տիկ ֆալցո մը կոխելու ըլլան նէ, մահալէ
մը հալիւր գլորիս թօի կընեմ հա՛ ... նայէ
քսեմ ...

— Վո՛ւյ, կըուած բուրդ պըլըխներդ սի-
րեմ ... հայտէ եկու նայիմ անուշիկ էրիկս,
ամա ան ըսածիս չէ չպիտի ըսես ...

— Ի՛նչ, երթամ բախլավա առնե՞մ ...

— Շնորհակալ եմ ամա, անկէ զատ ...

— Փեսիդ բօլիթիքա ընե՞մ ...

— Շնորհակալ եմ ամա՞, տահա տահա ...

— Խնդում երես ըլլա՞մ ...

— Ատ ալ կայ ամա, պաշխա պաշխա ...

— Էյ ի՛նչ գիտնամ, խնամիիդ տալիս-
վուխուլթիւն ընեմ ...

— Վրադ բարի, ինչո՞ւ ... ան չէ ըսե-
լիքս ... սա վուր է աղջիկս քեզի բան մը
ըսաւ նէ ...

— Իշտէ հասկցանք, վարի քիլէրը պիտի
պառկինք, տեղ ըլլայ տէյի ...

— Ձէ ճանըմ, սա ուր է (չա՛ք, պաշիկ
մըն ալ) ...

— Կընիկ տամարներս թուլցուցիր, աս
ի՛նչ նէֆէս ունիս եղեր ... տէ ըսէ նայիմ ...

— Կայնէ, անանկ չըլլար, դուն ալ ինծի
պաշիկ մը ըրէ նայիմ ...

— Տէր ողորմեա՛յ ...

— Հայտէ հիմայ մէկը կուգայ ...

— Պէ ճանը՞մ ...

— Հայտէ՛, հայտէ՛ քի հասկնամ քի սիր-
տովդ է տէյի ...

— Վայ դառը միլլէթի վա՛յ ... նէ ի-
տիմ նէ օլտըմ ... ըսելով երբ կը պատրաս-
տուի կնկանը այտերուն մօտենալ,

— Ձէ՛ ... մինչեւ որ հա չըսես նէ չըլ-
լար ...

— Էյ ճանըմ, մէյմը ոտք ելայ ... պազ-
նեմ տէ անկէ ետքը ...

— Չըլլար, ի՛նչ ըսեմ նէ հա պիտի ը-
սե՞ս ...

— Բէք էյի՛ ... ասդին եկուր նայիմ ...

— Գիշերը ...

— Ծօ պիրադ երեղիւնիւ ուղա՛թ ...

— Աս գիշեր ... տա ...

— Բերքոնեա, իւզիւմիւն կ'ըլլամ կոր ...

— Հա՛ ամա՛, աս գիշեր մէկտեղ բիւ-
թիւնս մէկ ...

— Նասը կուզես նէ, ճանըմ տուտախս
հալան մնաց ...

— Պալօ պիտի տանիս ...

— Էնմ ...

— Ամա խօ՛սք տուր ...

— Էնմ ու ...

— Էլլաս խարես նէ՛ ...

— Ծօ կէշ կը լամ կոր ... էնմու ...

— Հա ըսի՞ր ...

— Էնմու ... ա՛ ա՛ ...

— Հայտէ հիմա ներս եկուր, ուրախ ֆըռ-
լախ հաց մը ուտենք տէ փեսաս երթայ քա-
նի մը կոոր լաթ իլէն սուռաթները առնէ
բերէ հաղըրուորինք վախտովը դուրս ելլանք ...

— Ախ ... կընիկ չէք մի, Աստուած
պատիժ տէյի ձեզի ստեղծիւ է քի մուր թէ-
փէյին վրայ թօփուղ ըլլաք, մենք ալ ձեզի
խարըմիշ ըլլանք ... ըսելով երկուքը մէկ
ներս կ'երթան ու բոլորը մէկ տաք վերա-
բերումով մը կը շրջապատեն Վիչէն աղան,
նա մանաւանդ երբ տիկինը կը յայտնէ անոր
հաւանութիւնը պալօի մասին:

Վիչէն աղայի դրոշմած սուրու պաշիկին
ջրոտ յերքը տեսնող միւսիւ Սաճայազեան
երբ կը տեսնէ, դահդահայով մը,

— Ատ ի՛նչ է, զոքանջ հանըմս, երեսդ
չունը լղեց ինչ եղաւ ...

— Ես լղեցի միւսիւ, ի՛նչ է, ի՛նչ ըսել
կուզես կոր ...

— Օ՛ ... ներեցէք, հաղար ներողու-
թիւն, մօռցայ թէ բարեկինդանի շարթու
մէջ կը գտնուինք ... կըսէ փեսան կարմը-
բելով:

— Ձեզի պէս սայղըսըղները ասանկ պիւր
տիւղ տուներնիս չի լեցուին նէ՞, մենք տա-
րին տասուերկու ամիս իրարու երես կը
թրջենք ... ի՛նչ գիտցար, կ'ըսէ Վիչէն ա-
ղան կընիւնը երեսը նայելով, որ ամօթէն
շրթունքը փրջիւղու աստիճան կը խածնէր ...

* * *

Ճաշը շատ զուարթ կ'անցնի, ու ժամը
երեքին մօտ, ամենքը վերի սենեակները կը
քաշուին հագուելու համար:

Քիչ ժամանակուան մէջ բոլորը մէկ կը
շտիւղին տունէն յարմարցուած մէկ մէկ քօս-

տիւններ, ու Վիչէն աղային ալ բաղնիքի պուռնուղ մը, դուռը ուսկուքա մը, ձեռքը բաւ մը, մէջը լիմոնով ու նարինջով, դէմքին ալ ալակերպ խաւաքարտէ դիմակ մը կանցնեն ու լապտեր մ'ալ ձեռքը տալով տունէն դուրս կ'ելան:

— Վախ Վիչէն վախ քի, սօնը սօնը դաւրաւար մասառաւ օլտուն ըսելով ձեխերուն մէջէն ճամբայ կը բանար խեղճ մարդը, ի սէր այն սուրու պաշկին՝ զոր դրոշմու սխալը գործած էր ակամայ:

— Վիչէն աղա լապտերը սանկ բռնէ, կոխած տեղս չեմ տեսնար կոր կ'ըսէ փեսան...

— Բեբրոնը թող ցուցնէ, ես վախիթ չունիմ հիմա օղլում ... հայտէ բերանս բանալ մի տար ...

— Աման ճանրմ Վիչէն աղա, քիչ մը կամաց, խնամիս ալ չի տեսնար կոր ...

— Քա երկու աչքը չիմէկ զարնողը պիւէ թէքէն մէքէն կուգայ կոր, ան միաչէնը նասըլ պիտի պէճէրէ ...

— Խօլթուխդ առ հայրիկ, իրարու բէք պիտի վալէք ... կ'ըսէ տիկին Սաճայազեան, ուրախութենէն աղու մը պէս ցատկընտելով:

— Հա ամա, էրիկը խողին տակը խոռթլախ կը կտրի եսվում ... ասանկ հեռուէն աղեկ է ...

— Աման Վիչէնցիոս աղա, բէք թօհափցեր ես ... կ'ըսէ տիկինը, որ քնչուի քօսթիւմ մը հագած էր ...

— Օ տէյիւ ամա, փեսանիս չեմ տեսնար կոր ...

— Նա' նա', խօլթուխս է Վիչէն աղա...

— Այո', երջանիկ եմ այս պահուս, քանի որ զոքանջ հանրմիս թիւը ինձ վիճակած է...

— Առքա եփիմ օ եանա, մայիլ օլտում օյանա, պեօյիե քեւամ քեքսե, սեմ պիր եանա, օ պիր եանա ..., իշտէ քու վիճակդ միւսիւ ... հրամանքդ կուգես նէ քիչ մըն ալ օլմուշ զոքանջդ ձգէ տէ կընիկդ խօլթուխդ քա ... կ'ըսէ Վիչէն աղան, թուղթէ մասքէն վեր առնելով:

— Ինձի նայէ Վիչէն աղա, ֆէնէնդ սանկ բռնէ, առչիս չեմ տեսնար կոր, կ'ըսէ Վիչէնին կինը:

— Փեսիդ աչքերը չամչրախ կը զարնէ

կոր, իմ պղպած ֆէնէնս ինչ լուս կընայ տարքեղի ...

Փողոցէն անցնող մէկ քանի Պէյօղլու միւսիւսիներ ի տես այս արտառոց խուճին խօսք նետել կ'ուզեն,

— Մասխառա, մասխառա, բաղնիքը տա՞ք է ...

— Հրամմերէս, մայրիկիդ ըսէ քի գայտէ չըլամա մը ընէ ...

— Սուս եղիր, ճանրմ Վիչէն աղա, աւօթ է ...

— Ծո', պիղիմ մեռելիոյս Վիչէն օլմասըն ... կ'ըսէ երիտասարդներէն մին ...

— Եօդ ծօ', ծնըն պու դասար գըզլարը եօդ տըր ...

— Աման սէնտէ, թօլլամըչ քի պալօտա օնա պունա չաթտըրսըն տէյի ...

— Կիմանա՞ք կոր քա ... սօնը սօնը սոս գէնահաթըն ալ ճակատիս փակցուցի՞ք ես ...

— Դուն անկաճ մի կախեր, ֆէնէնը սոսնկ բռնէ ...

— Ֆէնէնը ձգէ հիմա, մոմ բռնել կուտան կոր մարդուն ... չի հացա՞ր ինչ կըսեր կոր նէ ...

— Քա անխաւար ալ վալլեր է պուռնուղը ...

— Ինչ; ինչ ... պուխուղը վալլեր է մի ...

— Քար պերնիս, մեղայ Տէր Աստուած, տահա նէլէր Վիչէն աղա ...

Այսպէս խօսելէ աւելի կուռելով կը հասնին Օտէօնի դրան առջեւ, ուր Վիչէն աղա Ֆեհեռը ձեռքը առաջ անցնելով ներս մըտնալ կ'ուզէ ...

— Պիլեթ'թ ...

— Միւսիւ փեսայ, պիլեթ կըսէ կոր ...

— Այո' ... բա՛յց ... կարելի է որ ... ինչո՞ւ ... ինչ պատճառաւ ...

— Տէ մագէթա սէնտէ, հերիֆ պիլեթ խթէյօր, տուրմուշ քերականութիւն հէճէլէյօր ծօ' ... պազսանա քաջ քուռուշ տըր...

— Քաչ էրքէքսիւիդ ...

— Իշտէ պէն, պիրաէ ...

— Օնար գուռուշ, իքի քավալիէ պիր մէճիտիէ ...

— Վրադ մանտրուք ունի՞ս քա Բեբրոն...

— Տէր ողորմեայ, մանտրուքս ուրկէ է...

— Անլման փեսիդ ըսէ քի մասունք բանի քերականութենէն մէծիտիէ մը երկնայ ...

— Տուր ճանըմ, ամօթ է Վիչէն աղա...

— Բա ուսկուֆան գլոխս անցուցիք, պուռնուզը, պոյնուզը թախմիշ ըրիք, ֆէնէնը ծառքս տուիք ամօթ չէր տէ, հիմա փարային եկաւ նէ ամօթը մէյտան ելաւ...

— Հայտէ տուրմայընը միւսիւ, կէլէն-լէր վար ... կ'ըսէ դռնապանը:

— Տուր պէ' սէնտէ ... պօնօ մը գառ-չըլայորսն ... վերէճէյիդ իշտէ ըսելով կը ցնծայ քսան դրուշը ու բոլորը մէկ ներս կը խուժէն:

— Շըճ'ուդ ... հոս եկուր կընիկ, անանկ ալան քէնտինէ խող խաղալու ըլլաք նէ, սուռաթս վար առնելուս պէս հէյալ ի-չինտէ հէյալ կը խաղցունեմ, հա' ... ըսեմ քեզի ...

— Տէր ողորմեայ ... Սաղմոս քաղելու չն'ն հա' ... չօդ չէյ, ճահիլները ցատկին խաղան պիտի ... դուն ալ ֆէնէնդ մարէ պուճախ մը կեցիր ...

— Տունը պուլաշըն ունիմ հանըմ ...

— Նասըլ պուլաշըն ...

— Ինչ գիտնամ, ես աչճիի եամաթս եմ քա, ֆէնէնս մարեմ քէօչէ մը քաշուիմ քի, մէտէնիդ ըլլայ տէ հայտէ ըսէք ...

— Սուս ճանըմ Վիչէն աղա, քիթէ բեր-նէ մի պերէր ոտքդ պագնեմ, սանկ մէյ մը դառնանք տէ գանք ըսելով բոլորը մէկ հոս հոն կը ցրուին ու Վիչէն աղա օթեակի մը տակ կը կենայ անշարժ, մինչ երկու հոգի ցած ձայնով կը խօսակցին,

— Ան է ճանըմ, ներս մտնալուն պէս ճանչցայ ...

— Աղեկ եա, կընիկը ատտար շիշման չէ նէ ...

— Կընիկը չէ ան ծօ' ... զոքանջն է, սա ուր է առաջ սիրեց սիրեց տէ ետքէն աղջիկը գլոխը փաթթեց նէ ...

— Ծօ', աման մէյ մը տեսնայի տա կը-նիկը, պարէ աղուո՞ր է ...

— Էն, մեծպահքցու ... միտտ, հէմ ալ լեզուանի ...

— Էյ աղէ'կ եա, էրիկը ֆառղին չէ սանքի ...

— Հայվան օղլուն ֆառղին չէ զահէր,

ըլլայ նէ կը ձգէ քի ասանկ խածնէ տէ առնէ հոս բերէ ...

Վիչէն սղա, որ այս խօսակցութիւնը ա-կանջովը լսած էր, աւելի մանրամասն տե-ղեկութիւն առնելու և իրողութեան վստահ ըլլալու համար խօսքի կը խառնուի:

— Բարի իրիկուն ձեզ աղաք ...

— Օ' ... համամ գաշկընը, ասծուքա-րին ... պուռնուզը բէք վայլեր է ...

— Ան չէ եա, սա ձեր ըսած տէլիխան-լըն ո՞րն է քի զոքանջը կը սիրէ եղէր ...

— Ինչո՞ւդ պէտք, ո՞վ է նէ ...

— Ձէ, սանքի ես մօտէն կը ճանչնամ տէ անոր համար առ էտէպսիզները ...

— Նա' իշտէ տօքթօնի լաթեր է հագեր, քովինն ալ Վիչէնին կընիկն է, չիյտեմ ամա-մինք ան է տէյի թահմին կընենք կոր ...

— Հիչ չիւբնէ մընէք, թա քէնտիսի ...

— Էյ ատ էրիկը ի՞նչ էշօղլու մարդ է եղեր քի, ասանկ իրինկուն ձգեր է քի ել-լան հոս գան տէյի ...

— Աման գէշ մի զուրցէք աղաք, քիմ պիլիր մարդը ինչ տէրտի մէջ է ...

— Տէրտէրը տանի վուճուտը ... ասիկայ նամուս է, բռասա տօլմասի չէ ...

— Ատ Վիչէն ըսածնիդ ես մօտէն կը ճանչնամ, գիտնալըս աս իրինկուն կընիկը ձգեց ...

— Էշէկ հէրիֆը նամուսուղճա կընիկը ձգելուն, առաջուրնէ աչքը ետին թող ձը-գէր քի էլ ալէմը վրան չի խօսաթէր ...

Նոյն պահուն տիկինը և փեսան, որոնք երկորեակի պէս իրարու թեւէ չէին դատուէր, Վիչէն աղայի մօտենալով,

— Հայտէ քեզի հետ ալ մէյմը դառնանք...

— Ես կեցած տեղս կը դառնամ կոր, հաթթա թէաթոօին թալանն ալ հետս կը դառնայ կոր, անոր ասոր լեզուն ալ վրաս կը դառնայ կոր ...

— Էյ ամա'ն դուն ալ, սիրտս վեր մի հանէր, դող կ'ելլամ կոր ...

— Շէքէրը կըտրի նէ, վեր ելած քէօ-րիկը նստի տէյի ջուր կը սրսկեն, քու սիր-տըդ ալ վեր է ելեր նէ, թուքնեմ պիտի քի հանդարտի ...

— Վիչէն աղա' ... խելքիդ եկաւ ...

— Խելքիս եկաւ քի, իրար ձգելու վախ-

տը եկաւ . . . ալթըն շիւբէս չի մնաց, պա-
տի ալթիօսի պէս ֆօյանիդ ան աս կը խօրա-
թեն կոր, դուք ինծի աս գիշեր պուշնուզ
թէրթիպ ըրիք ամա մէյէր ասը պուշնուզը
չատոնց թախմիշ ըրիք էք եղէր . . ., ինծի
նայէ միւսիւ, հրամանքդ առապատ կը քա-
շէս, չէնէ մի քաշել տամ . . .

— Ուրդ պագնեմ վիշէն աղա, ինքզին-
քիդ եկուր . . . կըսէ կինը այլայլմէ եղած:

— Ուր տեղս պագնես նէ պօշ է, տա-
ղալը էշու պէս մէյէր էլ ալէմը իս ֆասը
կընէ կոր եղեր տէ խապար չունիմ . . .

— Քա կիւլ ֆիտան փեսաս չեն քաշեր
կոր ան է, դուն անկա՞ծ մի կախեր . . .

— Հիմա անկաճներս չեմ կախեր կոր,
կը անկեմ կոր, հէմ ալ կիմանամ կոր, ան
կիւլ ֆիտանի ըսածըդ մէշէ օտուռնի ալ չէ . . .

— Քա մարդ Աստուծոյ, կընիկդ նայէ,
մէյ մըն ալ փեսաիդ նայէ . . . կը վալլէ՞ կոր . . .

— Տահա չի խանելով ալ ինքիզինքնիդ
ինծի վալլեցնել կուտաք կոր, հա՞ . . . ըսե-
լով երբ յետին ծայր բարկացած սլաքահան-
դէսէն դուրս կը խոյանայ ու մութին մէջ
արագ արագ քալելով չիտակ տանը ճամբան
կը բռնէ՞ շատ մը բլաններ գծելով մտքին
մէջ, իրեն հետեւող ոսնաձայն մը ուշադրու-
թիւնը կը գրաւէ յանկարծ, ու կարծելով թէ
իր կինն է եկողը սիրտը առնելու համար,

— Էտէպիդ, կընես կըլլաս տէ հէմա
ալ ալի չունի պէս ետեւէս կիցսա կոր . . .
ըսելով երբ ետին կը դառնայ . . .

— Պօյըդ պօսըդ սիրեմ խնամի, ես եմ
ես . . . խըս մեղար, մէյէր ասանկ բան մը
ըլլար քի մինակ մնայինք տէ երող մրկող
սիրտս քեզի բանայի . . .

—

* * *

Անդիմակ մասխառկութիւնները, որոնց-
մով տողորուած են կարգ մը չըլըքստի ըն-
տանիքներու ներքին կեանքը կը գերազան-
ցեն այն արտառոց կատակաբանութիւնները,
որոնք կանցնին Բարեկենդանի օրերուն:

Ամէն տուն լոյս մը կը վառի, և ամէն
կնկան մէջ . . . սիրտ մը:

ԼԷԼԱ

Ք Ր Ո Ն Ի Կ

Մեր յիմարանոցին հին կեօթիկներէն խնդ-
Արրահամին վերջին շահատակութիւնը օրուան
նիւթ դարձած է, նոյն խակ տեղական օտար
մամուլի մէջ, ուստի կարծէ որ անդրադառ-
նանք անոր վրայ:

Բայց նախ երկու խօսքով եղև ութիւնը
պատմենք:

Խնդ Արրահամ, մանիֆաթուրայի վա-
ճառականի մը չափ հանրածանօթ դէմք մըն
է մեր յիմարական աշխարհին մէջ, վերջերս
իր անունը անմահացնող ժան Վալթանտիլան
դործի մը կը ձեռնարկէ և կը յաջողի, այն է
խակապէս չմոռած մեռնիլ:

Պէտք է դիտնալ որ մեր յիմարանոցի յի-
մարներուն համար գաւաթ մը ջուր խմելու
պէս դիւրին գործ մըն է ասիկա, քանի որ,
իրենց գլխաւոր զբաղումներէն մէկն ալ մե-
ռել լուալ: (Այս բառը իրենց բառարանին
մէջ «էյլեմիւր քլլալ» ին հոմանիշ տրուած է):

Եւ խնդ Արրահամ, շուրջ 20-25 տար-
ուան խղճամիտ անդադար աշխատութեան
չնորհիւ՝ մասնագիտութեան տարած էր զայն:

Եւ Արրահամ՝ իր արհեստին մէջ, մեծե-
րուն (յիմարապահերուն) աչքին այնչափ մը-
տած էր, որ բայի այրերէն՝ կիներն ու աղ-
ջիկներն ալ իրեն կը յանձնէին լուալու հա-
մար, բայց այս Արրահամեան համոզ բախտն
չուտով խափանուեցաւ, դարձեալ իր մէկ
անհաճոյ կատակին պատճառաւ:

Այսպէս ասիէ մէկ երկու շաբաթ առաջ,
յիմարապետը զանազան աշխատութիւններ
կը յանձնէ յիմարներուն ըստ բժշկական հը-
րահանգի, այսպէս. օրինակի համար Հաժ-
բարին, երթալ Մեծ Նոր խանէն 80 օխա մոմ
չալկիլ բերել, Կարապետին սա, Մարկոսին
նա, և խնդ Արրահամին ալ բաւական գի-
րուկ մեռել մը լուալ:

Ինչպէս կը տեսնէք ամէնն ալ թեթեւակի
և ժամանցի համար ընտրուած գործեր:

Հիմա ընթերցողները պահ մը կը հրաւի-
րենք հոգեհոն ըստած սրահը, բոլորովին
մերկանդամ և յաղթամարմին մէկը, հասակը
փռած է գետինը, անոր քով կուժ մը ջուր,
և խնդ Արրահամը՝ ծունդի եկած, ժպիտ

ի շրթունս, արտասանելու վրայ մէկը իր դեղեցիկ մենախօսութիւններէն, ուրկէ ահա քանի մը տող.

«Ծօ՛ ես աղքատ, հէ՞, հի՛ հի՛ հի՛ հի՛, էսի՛ ջոջ, հա՛ հա՛ հա՛, էս մեռնիմ նը, իս շալակով տը տանին, հէ՞ հէ՞ հէ՞, էսի կարդալով պիտոր տանին, էս քէ հօր պապուն խեղճ եմ անիծեր, դրացու լաճ, հա՛ հա՛ հա՛ հա՛ (ամէն մէկ բառին քիթը վեր կը քաշէ, կը խառնէ և թեզանիքով կը սրբէ), իս ինչէ՞ չտանին, հի՛ հի՛ հի՛ հի՛, թէօ՛ղ տանին, հա՛ հայտէ, տարիք կըսի՛մ, հի՛ հայտէ, ի՞նչ քէ-ցեր ես ծօ՛, չտանին, քեզ կասի՛մ ծօ, չի՛ս լսեր, հա՛ հա՛ հա՛, հիմաճույ կը լսիս, հի՛ հի՛ հի՛ հի՛, չա՛ լս, չո՛ւ լս, քի՛ւ լս, բա՛ լս, (և խեղճ մեռելը աճառի տեղ բռունցք և կից ու ջուրի տեղ լորցունք կ'ընդունի առա-տօրէն):

Վերջապէս՝ մեռելին տեղ ինքզինքը կը պատանքէ և ճողը մտնելով լաթը վրան կը քաշէ, մեռելն ալ հոգեւորական մէկ անկիւնը հին պահարանի մը մէջ կը խօթէ, «և կը սպասէ:

Տէրտէր, ժամկոչ, լուսարար, տիրացու և դաճաղակիր ու սգակիր ապուշները կուգան ու կը սկսին կարդալ:

Յայնժամ դղրդի ճաղն, բացուի կափա-րիչն, երեւի ձեռք մի, և որոտայ ձայն մի խռպոտ ի ներքուստ.

«Ծօ՛ ի՜նչ կանէ՛ք, ես հոս իմ նը»:

Յորժամ հովիւն մեռանի, փախլին ամե-նայն գառինք, և այսպէս խեղճ տէրտէրն լեղապատառ, ժամկոչն դուրս անկեալ լեղ-ուաւ, տիրացուն եռաձայն կազաչելով, լու-սարարն ապշահար, ընդ որս և ապուշքն չորիցս յիմարացեալ, դնեն ձիճօղն բրդ ի բա-պուճ ի կողմանս կողմանս:

Ահաւասիկ Հոմերական տեսարան մը որ հոս չի լմննար սակայն:

Յիմարները ուշաբերելով ետ կը դառնան և «զորս դու պատուիրեցեր» կը տփեն ի-րենց աղբարիկին ըրած խենդութեանը հա-մար:

Եւ ահա տեսարան կը փութայ յիմարա-պետ Վանլըեան էֆէնտի, իր բաղմաթիւ հե-տեւորդներով, իսկոյն հրամաններ կուտայ, ծրագիրներ կը խորհի կատղած Աջդաշեմը

հանդարտեցնելու համար, որ այս անգամ վրաւցընէ մահուան դուռը հասած էր, և վերջապէս «էվրէզա՛» գոչելու հարկ չի մը-նար, բուն մեռելն է վար կ'իյնայ պահարա-նէն:

Հիմա գանք տէրտէրին՝ որուն լեղին բըր-դելու աստիճան բարակցած է եղեր, ժամ-կոչին՝ որ օրը երկու անգամ՝ սքալմոզէ կը բռնուի կոր եղեր, լուսարարին՝ որ այդ խու-ճապին մէջ շուարանքէն մտնէ կոր բռնելով՝ գլխուն ամբողջ բերքը վրայ տուած է, խենդ Արքահամին՝ հերոսին, որ առաջին ան-գամ ըլլալով՝ կերած ծեծին շնորհիւ անկո-ղին ըսուածը կը վայելէ կոր, և յիմարապետ Վանլըեան էֆէնտի, որ ամենէն աւելի վրայ տուողն է ... Տիւեհե մը և չորս կելա:

Այս կատակերգութիւնը առաջինը չէ որ կը ներկայացուի մեր յիմարանոցին մէջ, որ-չափ մեռելներ անթաղ մնացած են ասանկ յիմարներու ձեռքը խաղալիք:

Զարմանալու ապշելու բան բնաւ չկայ, երբ Արքահամ ասանկ բան մը կ'ընէ, այլ զարմանալու է տնօրէնութեան կարգադրու-թեանցը վրայ, որ յիմարներուն անանկ գոր-ծեր կը յանձնէ:

Հապա որչափ եւս պատասխանատուու-թեան մեծ բաժին մը ունի յիմարապետ Վան-լըեան էֆէնտի, որ յիմարապետ ըլլալէ ա-ռաջ վարժապետ էր, և շատ լաւ գիտէ աս պարագան թէ՛ դասի առնէ երբ տղայ մը մատը վեր առնէ և հրաման ուղէ ու երթայ, գալու քիչ մը ուշանալուն պէտք է ետեւէն երթայ և փնտռէ:

Բայց աւելի կարեւորագոյն քան զսա ՏԻԻՇԷՇՆ և ԿԷԼԱՆ, ոյք փառատին գյօրան-ջըն և մոռացուցանեն զբացակայութիւնն յի-մարաց:

Թող այս միջադէպը վերջինը՝ և դաս մը ըլլայ մեր հին դաստառը նոր յիմարապետին:

Բերա

ԱՆԿՈՒՏ ԳԻՇԵՐՈՒԿ

ՅԱԶՈՐԿ ԹԻԻՈՎ

ԶԱԶԱ

ՄԱՍՔԵՆԵՐԸ

Յ. Ա. Լ. ՓԻԱՐԻՆ

Գիշեր է, ցուրտ ու մթին, ձիւնը մեղմիկ կը տեղայ
Փողոցները լուսազարդ է, անց ու դարձողն ամեն ազգէ,
Որոնց մեջէն շատաւ, այր, կին, աղջիկ կամ տղայ
Կը վազվզեն աշ ու ձախ դեմքերնին գոց ու մասկ :

Սա կի՛ն մըն է ծագում, հազա՛մ փոքրիւմ մը դեղին
Կախում քեւէն ընկերոջ մ'ան ալ ափ սեւ *soulie*,
Երկուքն ալ շի՛ք ու քեքեւ բարի ծաղկունք . . . դեղին
Կանցնին կ'երթան պարելով *tenant toujours la mine haut* !

Ուրիշ կիներ ալ հոս հոն, փուշերու մէջ փաթուած
Որք կը խայտան կը վազեն, հոն ուր լոյսեր կը վառին,
Խելացնոր դիւահար . . . ո՛վ են ասոնք Տէր Աստուած,
Արդեօք ինկած դեւե՛ր են, եւ կամ հրեշտակ վարին :

Ներսն *onfkeur* ան կը հնչէ, զոյգեր փարած իրարու,
Կը բոչին անանկ որ, դիտողն կարծէ մէկ մարմին,
Որք իր սերը կ'երգէ, որն ընկերոջն իր արու
Սիրս կը բանայ ոնով մը մեղրածորան ու քարմին :


Voulez-vous bien mon poupé m'offrir un vers de champagne
Կրտսն այսպէս ակնջին տղու մը որ կը սուրայ
Je suis ici pour se soir, j'abite toujours la campagne
Ու ալ տղան անձնասուր կ'ըլլայ պլուզին այդ *սիռա* :

Ուրիշ մ'անդին *skfozpk* քեւասարած հրեշտակ
Որուն կուրծք բաց փառէ յուզեալ նման ծովու վէս
Մօտը ապուշ մարդուկ մ'որ փախել չիյէ շի՛ք շի՛ք
Նստեր շողիկ վազցնէ ու կը նայի կովու պէս :

Օրեակին մէջ հոն վերը զոյգ սեւուլիկ ժամաներ
Հովափարին ետեւէն նաքօ կրնեն համարձակ
Ու մինչեւ որ սրափիս ու նանչնաս քէ հիշդ ա՛ն էր . . .
Ուրիշ մ'արդէն յայտնած է սերը արտին բացարձակ :

Պարահանդեսն ընդհանուր ես կըմբռնեմ մի պարտեզ
Տամաները ծաղիկներ՝ փափախէները քոջիկ,
Կը մօտենան հոտոտել զտնելով լայն ասպարէզ
Ուր պարտիզպան մը չիկայ անոնց ըսող . . . « մի դպչի՛ք » :

Լ Ի Լ Ա



ՍԿԻՒՏԱՐ. — Հոս կարգ մը տի-
կիններ և հասուկ ու անցուկ օրիորդ-
ներ, մեծպահքի առթիւ ան աս բամ-
բասելու համար կզակնին մասած ընել
տալու վրայ են: (Այդպէս կզակնուն
ուժ որ կուտան, լեզունին սրցնելու
համար ուր պէտք է քսեն. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Թէյըէիս թուանը ապա-
գայ զաւակը տեսնելու նպատակաւ
ամէն շաբաթ իրինկուն հոս մնացող
միւսին, կըսուի թէ Յոյն սպասուհիի
մը սենեկին պաուլին մէջէն դուրս
հանուեցաւ անցեալ գիշեր:

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Կրօնական ժողո-
վէն խնդրելով կը խնդրուի, որպէս զի
տեղւոյն եկեղեցիին համար մնայուն
քահանաներու թիւը աւելցուի, և
այսպէս նշանաւոր օրերու ի խնդիր մա-
մոնային երբ գտնուածները հոս հոն
պտոյտի ելլան, ուրիշ թաղերէ գիւ-
ուածաւ հող գտնուող քահանաներու
չ'առաջարկուի սպատարագ մատուցա-
նել: (Համբերեցէք որ նորակազմ Թաղ-
Խորհուրդը ձեր խնդիրքը լուծէ. Ծ. Խ.):

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Տեղւոյս վար-
ժուհին սովորութիւն է ըրեր ցերեկ-
ները աշակերտուհեաց կերակուրներուն
համը նայիլ, այսինքն . . . փառաւո-
րապէս ճաշակել, միասին լաւ ջուր ալ
խմելով: Անցեալ օր աշակերտուհիներ-
էն մին անօթի ծարաւ տուն վերա-
դարձեր է, շնորհիւ այդ բիս-պօղազ
վարժուհիին: (Ոչ միայն հացիւ կեցցէ
մարդ . . . այլ բանիւ Հանրագիտա-
կին՝ Օրիորդ. Ծ. Խ.):

ԵՆԻ-ԴԱՐՈՒ (Տէյիւմէն փողոց). —
Հոս անցած Երկուշաբթի գիշեր, բա-
րեկենդանէն մնացած խուճաք մը ցաս-
կեմներ, փորձեցին սուառեալ ետնի-
գաբու մը սարքել մինչեւ լոյս: Սակայն
կէս գիշերին՝ քովի տունէն արգելք
եղան, որովհետեւ տուններին փակու-
վածքին մէջ էր: Ասոր վրայ, երկ-
սեռ ցատկեմները փետտուած հընդ-
կահաւերու պէս՝ պոչերնուն վրայնայն-
լով մեկնեցան ի մեծ ցաւ տունը մնա-
ցողներուն:

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

ՊԱՐԳԵՒԱԽՈՐ

ԼՈՒԾՈՒՄ

Մեր 24 փետր. թիւ 26ին մէջ հրատա-
րակուած հանելուկին լուծումն է հետեւեալը:

Ը էիր, nsfդ կոսրեցիր եղար Ր

Ը = 8. $625 \times 8 = 5000 =$ Ր

Մեզ հասած 32 սրտասխաններուն մէջէն ճիշդ
լուծած են՝ Տիար Եր. Մալխասեան և Օր-
Ագապի Յովհաննէսեան:

Որոնցմէ Տիար Եր. Մալխասեան վիճա-
կաւ կստանայ խօստացուած կաղամարի կաղ-
մածքը:

Արտօմատիկ ԱՐԾԻՆ ԼՈՒԾՈՒՄ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասեալի թիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ


Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց շիք եւ դիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրջ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—26



ԱՌԻԹԷՆ

[ՕԳՏՈՒԵՑԷ՛Ք

ՓՈՒԹԱՑԷ՛Ք ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

ձեռք պէյ խանի
տակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօրի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ենի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամպարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիռիկլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար չաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայկթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ աճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-15

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։